# ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

## ՀԵՌԱԳԻՐԸ ՍԹԱԼԻՆԻ

# Հայերը կը յուսան համախմբուիլ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

ՄՈՍԿՈՒԱ 22.— Էջմիածնի մէջ գումարուող Հայ եկեղեցական Համագումարին մասնակցող Կաթողիկոսը, Պատրիարքները և Եպիսկոպոսները, ինչպէս նաև Սովիէթ Միութեան և Սփիւռքի Հայերը ներկայացնող բոլոր պատգամաւորները երախտագիտ Սթալինի ուղղեցին հեռագիր մը, ուր ջերմանաւորաբար կ'ըսեն. «ՁԵՐ ՇՆՈՐՀԻՒ Է ՈՐ ԿԱՐԵԼԻ ԵՂԱՒ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱԶԱՏԱԳՐՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ. ՀԱՄՈԶՈՒԱԾ ԵՆՔ ՈՐ ՁԵՐ ԱՋԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՊԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՆԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԶՆԵՐԸ ՍՓԻՒՌՔԻ ՀԱՅԵՐՈՒՆ, ՀԻՄԱ ԱՆՈՆՑ ՀԱՅՐԵՆԻՔԻ, ԲԱՅՑ ՈՐՈՆՔ ՕՐ ՄԸ ՊԻՏԻ ՎԵՐԱԴԱՌՆԱՆ ԻՐԵՆՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԻԷԹ. ՀԱՅՐԵՆԻՔԸ.»

### ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՄԵԿՆՈՒՄԸ

Եգիպտական «Ահրամ» թերթին թղթակիցը Անգարայէն կը հաղորդէ որ Պոլսոյ Պատրիարքական Տեղապահ Արսլանեան Արքեպս., մասնաւոր պատուիրակութեան մը հետ մեկնեցաւ Երեւան, Սոֆիայի ճամբայ։ Սովիէթ մասնաւոր օդանաւ մը Սոֆիայի մէջ դրուած է անոնց տրամադրութեան տակ։

Կաթողիկոսի հանդիսաւոր ընտրութիւնը բաղձանքն է Սթալինի, և կը կարծուի թէ նպատակ ունի համահայկական միութիւնը իրականացնելու։ Էջմիածնի ժողովին մէջ պիտի ծեծուին աշխարհի մէջ ցրուած Հայերու կացութեան վերաբերող կարգ մը խնդիրներ։

ZARTONK | June 24, 1945